ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 6 » օգոստոսի 2019թ

N 25

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ կետերով՝համայնքի ճանապարհի մայթերի բարեկարգման աշխատանքների իրականացման, վերահսկման և թերությունների գնահատման նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին / Ս. Գրիգորյան / `սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Հանձնաժողովին / Ս. Գրիգորյան /`սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել համայնքի ավագանու անդամ `Գագիկ Թեմուրյանին / համաձայնությամբ/:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի օգոստոս 6
Գրիբոյեդով համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ղեկավարի
2019 թվականի օգոստոսի 6-ի
N 25 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Գրիգորյան — համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

Լ.Գևորգյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Դ. Դավթյան — համայնքապետարանի վարորդ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Քեշիշ-Ղուկասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 12 » օգոստոսի 2019թ N 26

ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՎԱԾ ՀԱՏՎԱԾԻ ՄԱՅԹԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել գնահատող հանձնաժողով համայնքի Չարենցի փողոցի ասֆալտապատված հատվածի մայթերի վերանորոգման աշխատանքների ձեռք բերման համար և հաստատել հանձնաժողովի կազմը համաձայն հավելվածի:

2. Չարենցի փողոցի ասֆալտապատված հատվածի մայթերի վերանորոգման աշխատանքների ձեռք բերման գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Լուսինե Գևորգյանին:

3.Գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել 2019թվականի օգոստոսի 14-ին ժամը 12:00-ին, Արմավիրի մարզի Գրիբոյեդովի համայնքապետարանի շենքում,Գրիբոյեդով համայնք, Չարենցի 9 հասցեում:

4.Գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի համապատասխան:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 12
Գրիբոյեդով համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ղեկավարի
2019 թվականի օգոստոսի 12-ի
N 26 կարգադրության

ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՎԱԾ ՀԱՏՎԱԾԻ ՄԱՅԹԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Գրիգորյան — համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝

Դ. Շուշանյան — աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Հ. Պետրոսյան — « Գրիբոյեդովի բուժ ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Քեշիշ-Ղուկասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » օգոստոսի 2019թ N 33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Գնումների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, 3-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 10-ի « Արմավիրի մարզի Գրիբոյեդովի համայնքապետարանի 2019 թվականի գնումների պլանը հաստատելու մասին » N2 որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 12
Գրիբոյեդով համայնք